

BNAGIRK' YISATAKAC'. DOCUMENTA MEMORIAE: *Dall' Italia e dall' Armenia. Studi in onore di Gabriella Uluhogian / a cura di Valentina Calzolari, Anna Sirinian, Boghos Levon Zekiyan, Bologna, Dipartimento di Paleografia e Medievistica, Alma Mater Studiorum - Università di Bologna, 2004, 405 p.*

Բնագիրք հիշատակաց. Իտալիայից և Հայաստանից: *Հետազոտություններ Գաբրիելա Ուլուհոջյանի պատվին / խմբագրությամբ Վալենտինա Կալցոլարիի, Աննա Շիրինյանի, Լևոն Զեքիյանի, Հնագրության և միջնադարագիտության բաժանմունք, Բոլոնիայի համալսարան, 2004, 405 էջ:*

Հայագիտության սպասավորներից քչերը կարող են հպարտանալ, որ իրենց գործունեության ամենաբեղուն շրջանում տարբեր երկրների գիտական կենտրոններում աշխատող աշակերտների և գործընկերների համատեղ ջանքերով հրապարակվել է իրենց գիտական գործունեության որևէ տարելիցին նվիրված հոդվածների ժողովածու: Հարազատ կրթօջախի կողմից նման հարգանքի է արժանացել Բոլոնիայի համալսարանի հայագիտության ամբիոնի վարիչ պրոֆ. Գաբրիելա Ուլուհոջյանը: Այս պատվին նա արժանացել է իր մանկավարժական բեղուն գործունեության, հայագիտության բնագավառում հրապարակած հետազոտությունների և խորապես մարդկային հատկանիշների շնորհիվ:

Հատորը խմբագրել են Ժնևի համալսարանի հայագիտության ամբիոնի վարիչ, պրոֆ. Վ. Կալցոլարին, Բոլոնիայի համալսարանի դոկտ. Ա. Շիրինյանը և Վենետիկի Կա' Ֆոսկարի և Հռոմի Քահանայապետական Արևելագիտության ինստիտուտի պրոֆ. Լ. Զեքիյանը:

Ժողովածուն սկսվում է Բոլոնիայի համալսարանի Հնագրության և միջնադարագիտության մասնաճյուղի տնօրեն, պրոֆ. Մ. Սոնտանարիի շնորհակալական ուղերձով (էջ V-VI): Հեղինակը հոբելյարին ներկայացնող ջերմ խոսքում ընդհանուր գծերով պատկերում է Գ. Ուլուհոջյանի՝ համեստ մարդու, բազմաբեղուն գիտնականի և շնորհաշատ մանկավարժի ներդրումը Բոլոնիայի համալսարանի հնագրության և միջնադարագիտության բաժանմունքում հայագիտության ամբիոն ստեղծելու և ղեկավարելու գործում:

Առաջաբանում (էջ VII-XII) ժողովածուի խմբագիրները ներկայացնում են հոբելյարի արժանիքները, ներդրումը հայագիտության, հայ-իտալական մշակութային փոխհարաբերությունների մերձեցման բնագավառում: Գ. Ուլուհոջյանի աշակերտների, հայաստանցի ու իտալացի գործընկերների համատեղ ջանքերով

ստեղծված ժողովածուն փաստորեն վերաբերում է հորեյարի գիտական հետաքրքրությունների գրեթե բոլոր բնագավառներին, և խմբագիրների հավաքած հոդվածները ներկայացնում են հայագետի անցած ուղին՝ Ձեռագրագիտություն-բանասիրություն, Պատմություն-պատմագրություն-հայրաբանություն, Լեզվաբանություն, Արվեստ-ճարտարապետություն-հնավայրեր բաժիններում: Խմբագիրների կարևորագույն ձեռնարկներից է նաև Գ. Ուլուհոջյան-գիտնականի մատենագիտության (էջ XIII-XXII) կազմումը և հրապարակումը, որը հայագետներին հնարավորություն կտա ավելի ամբողջական պատկերացում կազմելու հորեյարի գիտական բազմակողմանի վաստակի և հետաքրքրությունների մասին: Հայագետ-մանկավարժի գործունեության, հայրենաբաղձ հոգու համակողմանի ներկայացմանն է իր խոսքը նվիրել (էջ XXIII-XXVII) ՀՀ ԳԱԱ փոխպրեզիդենտ, հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Վ. Բարխուդարյանը:

Ժողովածուի առաջին մասը վերնագրվել է «Հայագետի անցած ուղին», ուր «Գաբրիելա Ուլուհոջյան. Հայաստանը հետազոտությունների կենտրոնում» (*Gabriella Uluhogian. L'Armenia al centro dell'interesse*, էջ 3-10) հոդվածով հանդես է եկել Միլանի կաթոլիկ համալսարանի պրոֆ. Ջ. Բոլոնիեզին, իսկ պրոֆ. Լ. Ջեքիյանը ներկայացրել է «Գաբրիելա Ուլուհոջյանի գիտական գործունեությունը և նպաստը ժամանակակից հայագիտության համապատկերում» (*L'attività e la produzione scientifica di Gabriella Uluhogian nel panorama degli studi armenistici contemporanei*) հետազոտությունը:

Այդ աշխատություններում նշվում է, որ գիտնական հորեյարը ծնվել է Եղեռնից փրկված ամուսինների ընտանիքում (հայրը Խարբերդից է, մայրը՝ Կոստանդնուպոլսից): Հայագիտության նկատմամբ սերը ժառանգել է, հավանաբար, հորից, որն ավարտել է Վենետիկի Մխիթարյանների Մուրադ-Ռաֆայելյան դպրոցը: Ավարտելով լիցեյը՝ Գ. Ուլուհոջյանը 1953 թ. ընդունվում է Միլանի կաթոլիկական համալսարանի բանասիրության և փիլիսոփայության բաժինը: Ուսումնառության շրջանում Ջիանկառլո Բոլոնիեզիի ղեկավարությամբ նա մեծ հաջողություններ է ցուցաբերում հնդեվրոպական լեզվաբանության բնագավառում և կրթության երրորդ տարուց մասնագիտանում է դասական լեզուների ու բանասիրության խնդիրներում՝ միաժամանակ խորացնելով գրաբարի և արևմտահայերենի գիտելիքները:

Համալսարանն ավարտելուց հետո Գ. Ուլուհոջյանին իր ծրագրի մեջ է ներգրավում Գեորգ Պիսիդացու «Վեցարեից»-ի քննական բնագիրը պատրաստող, նշանավոր բուզանդագետ, պրոֆ. Ագուստինո Պերտուզին՝ առաջարկելով հիշատակված բնագիրը զուգադրել միջնադարյան հայերեն թարգմանության հետ: Այս թեմայի հետ շփումը Գ. Ուլուհոջյանին մոտեցնում է հունաբան դպրոցի թարգմանություններին առնչվող խնդիրներին: Աշխատանքի ընթացքում գիտական լայն հետաքրքրություններ ունեցող հետազոտողը համագործակցում է սլավոնագետ Զուգեպե Ֆերմեյլայի հետ, որը նույն ծրագրի շրջանակներում կազմում էր Գեորգ Պիսիդացու երկի հին սլավոներեն բնագի-

րը: Գ. Ուլուհոջյանը 1959 թ. հրապարակում է Գեորգ Պիսիդացու «Վեցօրեից»-ի հայերեն միջնադարյան թարգմանությանը վերաբերող իր առաջին գիտական հոդվածը: Գ. Ուլուհոջյանի գիտական կյանքում մեծ դեր է խաղացել 1967 թ. օգոստոսի 28-ից սեպտեմբերի 2-ը Բուխարեստում կայացած Լեզվաբանների միջազգային X կոնգրեսը, ուր նա կապեր է հաստատում Խորհրդային Հայաստանի լեզվաբանության դպրոցի ներկայացուցիչների հետ, ապա գիտական գործուղումներ իրականացնում Խորհրդային Հայաստան՝ մասնագիտանալով նաև արևելահայերենի մեջ: Պաշտպանելով դոկտորական ավարտաճառ՝ նա 1973 թ. Բոլոնիայի համալսարանի պատմության բաժանմունքի տնօրեն, պրոֆ. Լուիջի Հեյլմանի հովանավորությամբ հիշյալ կրթօջախում հիմնադրում է Հայ գրականության և լեզվի ուսումնասիրության դասընթաց, որի հիման վրա էլ 1982 թ. ստեղծվում է համանուն ամբիոնը, երբ Գ. Ուլուհոջյանը ստանում է պրոֆեսորի կոչում: Այնուհետև հորեղյարը ձեռնամուխ է լինում Բարսեղ Կեսարացու միջնադարյան հայերեն թարգմանությունների հետազոտությանը՝ հիմք ունենալով ՄՄ-5595 (1276 թ.) մատյանը: Այդ աշխատանքի մեծագույն արդյունքը Բարսեղ Կեսարացու «Գիրք Հարցողաց» հրատարակությունն էր (*CSCO, v. 536-437, Scr. arm. t. 19-20, Lovanii, 1993*): Հորեղյարի հետաքրքրությունների ոլորտում է եղել վիմագրությունը, և նա սիրով թարգմանել ու հրատարակել է Անիի (*REArm, 23*) և Հին Ջուղայի Ս. Ստեփաննոս եկեղեցու արձանագրությունները (*Milano, 1981*): Հայագիտությունը Գ. Ուլուհոջյանին երախտապարտ է Դեռդադ Փափազյանի (1996, 1999) և մի շարք այլ գործիչների արխիվների հայտնաբերման (1978, 1991, 1996, 2000, 2001), XVIII-XX դարերի հայ-խտալական փոխհարաբերությունների պատմության (1985, 2003, 2004), Իտալիայում հանգրվանած հայկական ձեռագրերի հետազոտության (*Bologna, 2003*) համար: Գ. Ուլուհոջյանի աշխատանքների մեջ աչքի է ընկնում Եղիա Քյոմուրճյանի հայկական եկեղեցիների և սրբավայրերի քարտեզը (*Un'antica mappa dell'Armenia. Monasteri e santuari dal I al XVII secolo, Ravenna, 2000*), Փավստոս Բուզանդի Հայոց պատմության իտալերեն թարգմանությունը (Միլան, 1997): ՀՀ ԳԱԱ-ն 1994 թ. Գ. Ուլուհոջյանին շնորհեց պատվավոր դոկտորի կոչում: Հորեղյարի հետազոտությունները տարածվում են լեզվաբանության, բանասիրության, հնագրության, մանրանկարչության, վիմագրության, գրականության, արվեստի, քաղաքական և հոգևոր պատմության, աշխարհագրության, բանախոսության ասպարեզներում: Հետաքրքրությունների այս շրջանակով մեծավաստակ գիտնականը եռանդով է համակել նաև Բոլոնիայի հայագիտության ամբիոնի իր ուսանողներին: Այսօր էլ Գ. Ուլուհոջյանը գործունե մասնակցում է հայագիտական կազմակերպությունների աշխատանքներին և իտալական համալսարանների՝ միջնադարագիտության ու դասական բանասիրության շրջանակներում գործող գիտական ծրագրերին՝ դրանց մեջ ներգրավելով իր աշակերտներին և տարբեր երկրների գործընկերներին:

Գրախոսվող գրքի Ձեռագրագիտություն-բանասիրություն բաժնում հոդվածներ են հրապարակել պրոֆ. Վ. Կալցոլարին՝ «Ս. Պողոսի Վկայաբանության հայկական տարբերակի համեմատությունը հունարեն բնագրի հետ. նոր փաստեր հայկական

տասնմեկ անտիպ վկայությունների հիման վրա» (*II rapporto della versione armena del Martirio di Paolo con l'originale greco: nuovi contributi sulla base di undici testimoni armeni inediti*, 23-43), պրոֆ. Պ. Մուրադյանը՝ «Աստուածաշնչի հայկական խմբագրության բնագրական քննության աղբյուրները (Աթոսի 978 թ. գրչագիրը)» (էջ 45-66), դոկտ. Ա. Շիրինյանը՝ «Դրագարկից Հռոմ. Կիլիկիայի պատմության մի էջ ըստ կապիտոլի արխիվի Ս. Պետրոսի B 77 մատենի հիշատակարանի» (*Da Drazark a Roma: una pagina di storia ciliciana nel colofone del manoscritto Arch. Cap. S. Pietro B 77*, էջ 67-95), պատմական գիտությունների թեկնածու Գ. Տեր-Վարդանյանը՝ «Հայերեն ձեռագրերի կորսված հաւաքածուների ցուցակների հրատարակման խնդիրը: Նախնական հաղորդում. Լիմ անապատի 1282 թուականի վերագտնուած Նոր Կտակարանի առիթով», էջ 96-115):

Պատմություն-պատմագրություն-հայրաբանություն բաժնում հոդվածներ են հրապարակել ՀՀ ԳԱԱ ակադ. Ս. Արևշատյանը՝ «Մովսես Խորենացին ազգային ինքնորոշման և պետականության մասին» (*Movses Khorenats'i on national self-determination and statehood*, էջ 119-126), դոկտ. Ս. Բայսը՝ «Պոմպեոսը Կովկասում. պատմագրական ավանդույթների համեմատություն» (*Pompeo nel Caucaso: Tradizioni storiografiche a confronto*) (էջ 127-137), դոկտ. Ս. Բեռնարդելին (Մովսես Խորենացին և Ալեքսանդրի վեպը. բնագրային զուգադրման օրինակ) (*Movses Xorenac'i e il Romanzo di Alessandro: un esempio di intertestualità*, էջ 140-164), պատմական գիտությունների թեկնածու Պ. Չոբանյանը՝ «Ազգային առաջընթացի ուղիների որոնումները հայ գործիչների կողմից XVIII դարի երկրորդ կեսին» (էջ 165-179), դոկտ. Ա. Ֆերարին՝ «Մենք՝ Մեծ Հայաստանեայց իշխաններս եւ մելիքներս. ԺԸ դարի Այսրկովկասի հայ ազնվականության հետազոտության նախաբան» (*Menk' Mec Hayastaneac's isxank'ners ew melik'ners. Introduzione allo studio della nobiltà Armena in Transcaucasia nel XVIII secolo*, էջ 181-205), դոկտ. Ս. Մորանին՝ «Հույն պատմիչներից հատվածներ Եվսեբիոսի Ժամանակագրության հայերեն տարբերակում» (*Fragmenti di storici Greci nella versione Armena del Chronicon di Eusebio*, էջ 208-228), հայր Ռ. Պանեն՝ «Եղիշեի Վասն Զոջման ճառի շուրջ դիտողություններ» (*Note in margine a un'omelia di Elise sulla Penitenzia*, էջ 228-240), պատմական գիտությունների դոկտոր Ս. Շիրինյանը՝ «Փոխարկությունները քրիստոնեական պատմագրության մեջ» (էջ 241-253), պրոֆ. Զ. Տրախան՝ «Մի հայ դայեակ նախաքրիստոնեական Վրաստանում» (*Un Dayeak Armeno nell' Iberia precristiana*, էջ 255-262):

Լեզվաբանության բաժնում հրապարակված են դոկտ. Ռ. Բ. Ֆինացիի «Հայ-անգլիական լեզվաբանական հետաքրքրաշարժ առնչություններ» (*Curiosità Anglo-Armene*, էջ 265-283), դոկտ. Ս. Մանչինի Լոմբարդիի «Հունարեն շարադրանքի ավանդույթը ըստ Փիլոն Աղեքսանդրացու *Legum Allegoriae* երկի հայկական տարբերակի» (*La tradizione dei composti Greci nella versione Armena del Legum Allegoriae*

di Filone Alessandrino, էջ 285-295), բանասիրական գիտությունների թեկնածու Գ. Մուրադյանի «Նախահունարան թարգմանություններ» (*Pre-hellenizing translations*, էջ 298-315), դոկտ. Ա. Օրենգոյի «Թովմաս Կամպանելայի Քերականության հայերեն թարգմանության մի նոր խմբագրություն» (*Una nuova redazione della traduzione Armena die Gramatica di Tommaso Campanella*, էջ 317-336), դոկտ. Ա. Սկալայի «Հայերենը և գնչուների բարբառները. զանազան նշումներ և նոր առաջարկություններ» (*Armeno e dialetti zingari: note sparse e nuove proposte*, էջ 337-347), դոկտ. Ռ. Սգարբիի «Դիոնիսական *արվեստի* հայկական տարբերակին վերաբերող լեզվաբանական խնդիրներ» (*Problemi lessicali legati alla terminologia della versione Armena dell' Ars Dionisiana*, էջ 349-357) ուսումնասիրությունները:

Ժողովածուի վերջին բաժինն անվանված է Արվեստ-ճարտարապետություն-հնավայրեր: Այստեղ հոդվածներ են հրապարակել պրոֆ. Ա. Ալպագո Նովելլոն՝ «Ս. Սարգսի և Բաքոսի գյուղական սրբավայրը իրանական Ադրբեջանի Ուրմիա բնակավայրի մոտ» (*II «Santuario» rurale dei SS. Sergio e Bacco presso Urmiah nell' Azerbaigian Iraniano*, էջ 361-371), պրոֆ. Կ. Բոնարդին՝ «Հայկական Սուրբ Հոգի եկեղեցին Բոլոնիայում» (*Santo Spirito degli Armeni a Bologna*, էջ 373-390), պրոֆ. Մ. Ա. Լալա Կոմենեոն՝ «Պատմական Հայաստանի ճարտարապետական կառույցների տիպաբանության ակնարկներ» (*Cenni sulle tipologie delle strutture materiali nell' Armenia storica, XI-XV secolo*, էջ 391-402):

Ժողովածուն արժեքավոր նվեր է Բոլոնիայի համալսարանի կողմից Հայագիտության ամբիոնի ստեղծման և հոբելյարի գիտամանկավարժական գործունեության 30-րդ տարեդարձի առթիվ: Ցանկանանք Գաբրիելա Ուլուհոջյանին առողջություն և նոր հաջողություններ հայագիտության ասպարեզում:

ԲՈԶՈՅԱՆ Ա. Ա.

Պատմական գիտությունների դոկտոր